ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/01 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան

«13» հունիսի 2019թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Բոսնոյան- ՀՀ ԱԻՆ «Աղետների բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ բուժական աշխատանքների գծով:

Անդամներ՝

Ս. Գրիգորյան՝ ՀՀ ԱԻՆ «Աղետների բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի դեղատան պետ:

Թ. Ներսիսյան՝ ՀՀ ԱԻՆ «Աղետների բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի վարորդ:

Հ. Պետրոսյան՝ ՀՀ ԱԻՆ «Աղետների բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվապահ:

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Մարգարյան՝ ՀՀ ԱԻՆ Շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության փորձագետ:

Նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամների կողմից քննարկվեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվությունը և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

«Ֆլեշ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ ենթակետով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն, ուստի Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվեց իրականությանը չհամապատասխանող:

Կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը՝ «Ֆլեշ» ՍՊԸ -ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը՝ ընթացակարգը հայտարարել չկայացած:

3) Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Հանձնաժողովի նախագահ՝		**Ա. Բոսնոյան**
Հանձնաժողովի անդամներ՝		**Ս. Գրիգորյան**
		Թ. Ներսիսյան
		Հ. Պետրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝		**Ա. Մարգարյան**